ԿՈՎԿԱՍԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

ՆԱԶԱՐՅԱՆ Հ. Վ.

Կովկասյան տարածաշրջանը XX դարի սկզբից, շնորհիվ նավթային հսկայական պաշարների, ձեռք բերեց աշխարհառազմավարական կարևորագույն նշանակություն: Ինչպես Առաջին աշխարհամարտի, այնպես էլ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Կովկասը դարձավ Մեծ տերությունների շահերի բախման թատերաբեմ: Իսկ գերմանական աշխարհաքաղաքագիտության «հայրերից» մեկը՝ Կառլ Հաուսհոֆերը Կովկասը դասում էր պատմության մեջ հայտնի այսպես կոչված «պայքարի գոտիների» շարքին[1]:

Տարածաշրջանը հատկապես ռազմաստրատեգիական կենսական նշանակություն ուներ ռազմավարական հումքից, մասնավորապես նավթային պաշարներից զուրկ Գերմանիայի համար: Ի տարբերություն Առաջին աշխարհամարտի՝ Երկրորդ համաշխարհային պատերազմում վճռորոշ նշանակություն էր ստացել մեքենայացված (մասնավորապես տանկային) և ավիացիոն զորատեսակների կիրառումը, ինչն առանց նավթից ստացվող վառելիքի օգտագործման հնարավոր չէր: Հետևաբար ֆաշիստական Գերմանիայի ռազմաստրատեգիական կարևորագույն խնդիրներից մեկը նավթային պաշարներով հարուստ Կովկասի նվաճումն էր: Այս քայլով գերմանացիները լուծելու էին միաժամանակ երկու խնդիր: Առաջին՝ ռազմավարական հումքի, այն է՝ նավթային պաշարների նկատմամբ վերահսկողության սահմանում, որը հաստատում է գերմանական բանակի օպերատիվ վարչության ղեկավարի տեղակալ, գեներալ Վ. Վառլիմոնտը: Նա շեշտում էր ՕԿՎ-ի (վերմախտի գերագույն հրամանատարության) շահագրգռվածությունը Բաքվի նավթային շրջանի գրավման հարցում և նշում, որ «Գերմանիան կարող է ծածկել նավթային իր պահանջարկը միայն Կովկասի հաշվին»[2]:

Իր հերթին ամերիկացի հետազոտող Դանիել Երգինը իր հիմնարար աշխատության մեջ գրում է, որ «հենց ամենասկզբից Բաքվի և Կովկասյան այլ նավթահանքերի գրավումը հիտլերյան ռազմավարության հիմնական նպատակներից մեկն էր՝ ռուսական պատերազմաշրջանի ժամանակ»[3]:

---

[1] **Хаусхофер К.** *О геополитике, М., 2001, с. 127.*

[2] *Банкротство стратегии германского фашизма. Исторические очерки. Документы и материалы, т. 2, М., 1973, с. 146.*

[3] **Ергин Д.** *Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть, М., 1999, с. 352.*

Վերջապես երկրորդ կարևորագույն խնդիրը, որը պետք է լուծեին գերմանացիները, գրավելով Կովկասը, այն վերածելն էր պլացդարմի՝ Մերձավոր և Միջին Արևելք ներխուժելու համար: Մասնավորապես Գերմանիան իր քաղաքական նպատակն էր հռչակել գերիշխանության հաստատումը Կովկասի և նրան հարավից սահմանակից երկրների վրա՝ ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական տեսանկյունից:

Ֆաշիստական Գերմանիան ցանկանում էր օգտագործել Խորհրդային Միությանը սահմանակից պետություններին՝ ԽՍՀՄ-ին հարավից հարված հասցնելու համար: Միաժամանակ այդ երկրները պետք է ներգրավվեին Մեծ Բրիտանիայի դեմ պայքարում: Հիտլերի՝ 1941 թ. հունիսի 6-ին հաստատած թիվ 32 դիրեկտիվով («Բարբարոսա» ծրագրի իրականացմանն հաջորդած ժամանակահատվածում ռազմական գործողությունների պատրաստության մասին) նախատեսվում էր Թուրքիայի և Իրանի վրա ճնշում գործադրելով՝ հասնել վերջիններիս ներգրավմանը Անգլիայի դեմ պայքարում՝ Միջերկրական ծովում և Առաջավոր Ասիայում, այդ նպատակով իրականացնել զորաշարժ Բուլղարիայից Թուրքիա և Անդրկովկասից Իրան[4]:

Ելնելով վերը նշվածից՝ գերմանական ռազմական հետախուզությունը (Աբվեր), հատկապես 1941 թ. ամռանից սկսած, ուժեղացրեց իր քայքայիչ գործունեությունը Իրանում, Աֆղանստանում և հատկապես Թուրքիայում: Իրենց դիվերսիոն-հետախուզական գործողություններում աբվերականները մեծապես հենվում էին Թուրքիայի պանթուրքական, ինչպես նաև Կովկասի մահմեդական էմիգրանտական[5] շրջանակների վրա: Որպես ասվածի ապացույց՝ բերենք բազմաթիվ փաստերից միայն մեկը. 1925 թ. մինչև 1942 թ. Խորհրդային Ադրբեջանի տարածք են ներթափանցել մուսավաթական-աբվերական դիվերսանտների ավելի քան 30 խմբեր՝ քարոզչության իրականացման, ազգային ապստամբության կազմակերպման և Կովկասում իրավիճակի անկայունացման նպատակով[6]:

1941 թ. հունիսի 22-ին ԽՍՀՄ-ի վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակումով սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի գլխավոր փուլը՝ խորհրդային ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմը: 1941 թ. հունիսի 25-ին Մոսկվայում Թուրքիայի դեսպան Հայդար Աքթայը ԽՍՀՄ արտգործժողկոմին պաշտոնապես հայտարարեց, որ «Գերմանիայի և Խորհրդային Միության միջև պատերազմի հետևանքով ստեղծված առկա

---

[4] *Прусско-германский генеральный штаб 1640-1965. К его политической роли в истории. Пер. с нем., М., 1966, с. 486-487.*

[5] *Այս համատեքստում էր դիտարկվում գերմանական զինված ուժերի կազմում այսպես կոչված «ազգային լեգեոնների» ստեղծումը:*

[6] **Абрамян Э. А.** *Забытый легион. Книга первая, Е., 2005, с. 91.*

իրադրության պայմաններում Հանրապետության կառավարությունը որոշեց հրաժարվել Թուրքիայի չեզոքությունը»[7]:

Թեև թուրքական կառավարությունը պաշտոնապես հայտարարեց իր չեզոքության մասին, այդուհանդերձ երկրի ռազմաքաղաքական հետադեմ շրջանակներն այլ դիրքորոշում որդեգրեցին Խորհրդային Միության հանդեպ: Այսպես, օրինակ, Գերմանիայի կողմից ԽՍՀՄ-ի վրա հարձակման առթիվ թուրքական վերնախավի խանդավառությունն այնքան մեծ էր, որ արտգործնախարար Շ. Սարաջօղլուն հունիսի 22-ին հարկադրված էր անջատել հեռախոսը՝ ձերբազատվելու համար անվերջանալի զանգերից՝ կապված Գերմանա-թուրքական համաձայնագրի[8] կնքման և դրան հաջորդած Խորհրդային Միության վրա Գերմանիայի հարձակման հետ[9]:

Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին և հատկապես ֆաշիստական Գերմանիայի կողմից ԽՍՀՄ-ի վրա հարձակումից հետո Թուրքիայում նոր վերելք է ապրում նաև պանթուրքական (պանթուրանական) գաղափարախոսությունը: Եվ դա այն դեպքում, երբ հանրապետական Թուրքիայի սահմանադրությունն արգելում էր պանթուրքիզմի քարոզը[10]: Ինչպես իր աշխատության մեջ գրում է ամերիկացի պատմաբան Չ. Ու. Հոսթլերը՝ «Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը նոր հնարավորություններ բացեց թուրքական պանթուրքականների համար»[11]: Ի տարբերություն Կովկասի քրիստոնյաների՝ տեղի մահմեդական էմիգրանտների (կովկասյան թաթարներ (ադրբեջանցիներ), չեչեններ և այլն) մեծամասնությունը իր ազատագրումն այսպես կոչված «բոլշևիկյան լծից» տեսնում էր միայն Ռուսաստանի վաղեմի թշնամու՝ Թուրքիայի օգնությամբ: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ դեռևս 1920-ական թթ. Լեհաստանի և Թուրքիայի հովանավորությամբ Փարիզում ստեղծված «Պրոմեթեոս» (հետագայում՝ «Կովկասյան ժողովուրդների միություն», «Կովկասի

---

[7] *Внешняя политика Советского Союза в период Отечественной войны. Документы и материалы, т. 1, М., 1944, с. 114.*

[8] *1941 թ. հունիսի 18-ին՝ ԽՍՀՄ-ի վրա գերմանիայի հարձակումից 4 օր առաջ, Անկարայում Գերմանիայի դեսպան Ֆ. ֆոն Պապենը և Թուրքիայի արտգործնախարար Շ. Սարաջօղլուն ստորագրեցին գերմանա-թուրքական գաղտնի համաձայնագիր «Տարածքային անձեռնմխելիության և բարեկամության մասին»: Տե՛ս Дипломатический словарь, т. 1, М., 1984, с. 258.*

[9] **Корхмазян Р. С.** *Турецко-германские отношения в годы Второй мировой войны, Е., 1977, с. 92.*

[10] *Մանրամասն տե՛ս* **Кондакчян Р. П.** *Пропаганда пантюркизма в Турции в годы Второй мировой войны (Вестник Ереванского университета – այսուհետև ВЕУ, общ. науки, 1974, N 1, с. 189-205).*

[11] **Hostler Ch. W.** *Turkism and Soviets: The Turks of the World and their Political Objectives, London, 1957, p. 171.*

անկախության կոմիտե», «Կովկասյան համադաշնության ուխտ») անվանումով կով-կասյան հակախորհրդային կազմակերպությունների միությունն իր տպագիր օրգանը Ստամբուլում լույս ընծայելու արտոնություն է ստանում:

Թուրքիայում գնալով աճող պանթուրքական քարոզչության պայմաններում Ստամբուլում հայտնի պանթուրքականները՝ գեներալներ Նուրի փաշան[12], Մյուրսել փաշան, Ի. Սաբիսը, Հ. Էրքիլեթը ստեղծեցին հատուկ կենտրոն (1941 թ. նոյեմբեր)՝ հակախորհրդային գործունեություն ծավալելու նպատակով: Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում 1942 թ. հոկտեմբերին ստեղծվում է կոմիտե, որի խնդիրն էր ԽՍՀՄ-ից Ադրբեջանի անջատումը և միացումը Թուրքիային: Իսկ «Բոզ քուրթ» («Գորշ գայլ») ամսագիրը 1941 թ. հուլիսին տպագրեց մի հոդված՝ «Թուքիզմը սպասում է» վերնագրով: Դրան կից էր ապագա «Մեծ Թուրքիայի» քարտեզը, որում Թուրքիայի կազմի մեջ էին ներառված Անդրկովկասը և Միջին Ասիան[13]:

Դեռ 1941 թ. հուլիսի 4-ին Մոսկվայում անդրկովկասյան երեք հանրապետությունների ղեկավարների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարներ Գ. Հարությունյանի, Մ. Բաղիրովի, Կ. Չարկվիանիի հետ հանդիպման ժամանակ Ի. Ստալինն ասում է. «Թեև ռազմաճակատը ձեզանից (Անդրկովկասից) հեռու է, սակայն դուք վտանգավոր գոտում եք: Մենք չենք կարող վստահ լինել Թուրքիայի չեզոքության վրա: Եթե նա սկզբից չներքաշվի մեզ հետ պատերազմի մեջ, շատ հավանական է, որ թույլ կտա գերմանական նավերի մուտքը[14] Սև ծով... Ծայրահեղ դեպքում ինչ էլ որ լինի, պետք է պաշտպանել Բաքվի շրջանը: Սա է ձեր խնդիրը»[15]: Բավական է ասել, որ այդ ժամանակ Ադրբեջանը մնում էր ԽՍՀՄ-ի հիմնական նավթային բազան՝ տալով ԽՍՀՄ-ում արդյունահանվող նավթի 71.4%-ը[16]:

Արդեն 1941 թ. հուլիսի կեսերին ֆոն Պապենը Գերմանիայի ԱԳՆ-ին հայտնում էր. «Նկատի ունենալով գերմանացիների հաջողությունները Ռուսաստանում՝ թուրքական կառավարող շրջանակները ավելի ու ավելի են սկսում զբաղվել թուրք-ռուսական սահմանի այն կողմում գտնվող իրենց

---

[12] Էնվեր փաշայի ոչ պակաս տխրահռչակ խորթ եղբայրը: Հատկանշական է այն փաստը, որ գերմանացի միլիտարիստները (սկսած դեռ Առաջին աշխարհամարտի տարիներից) Թուրքիան անվանում էին Էնվերլանդ՝ի պատիվ Էնվեր փաշայի:

[13] История Азербайджана, т. 3, ч. II, Баку, 1963, с. 98.

[14] Եվ իսկապես, Թուրքիան խախտելով նեղուցների վերաբերյալ Մոնտրոյի կոնվենցիան (1936 թ. հուլիսի 20), պատերազմի ընթացքում բազմիցս թույլատրեց գերմանական և իտալական ռազմանավերի անցումը նեղուցներով դեպի Սև ծով: Մասնավորապես, 1941 թ. հուլիսի 9-ին գերմանական «Զեեֆալկե» պահականավակը, իսկ 1941 թ. օգոստոսին իտալական «Տարվիզիո» ռազմանավը նեղուցներով մտան Սև ծով:

[15] Кавказ выстоял, Кавказ победил! Ветераны вспоминают, Тбилиси, 1973, с. 130-131.

[16] История Азербайджана, т. 3, ч. II, с. 18.

հայրենակիցների՝ հատկապես ադրբեջանական թուրքերի վիճակով»[17]: Իսկ 1941 թ. հուլիսի 18-ին Թուրքիայի ԶՈՒ գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի պետ, գեներալ Ալի Ֆուադ Էրդենը ֆոն Պապենին հայտնում էր. «Թուրքիան բավարարված կլինի, եթե Կովկասում հաստատվի տեղական ժողովուրդների դաշնություն, միաժամանակ Կասպից ծովի արևելքում թուրքական անկախ պետության կազմավորումը դիտարկվում է որպես ամենաճիշտ որոշումը»[18]:

1941 թ. օգոստոսի 15-ին Անկարայից Բեռլինին ֆոն Պապենը հայտնում էր, որ թուրքական կառավարող շրջանակները շահագրգիռ են Ադրբեջանի, գլխավորապես Բաքվի նավթի գրավմամբ, և որ «այդ շրջանակները հակված են վերադառնալու 1918 թվականի դեպքերին և ուզում են իրենց միացնել Բաքվի նավթահանքերի շրջանը»[19]:

Իր հերթին Բեռլինում Թուրքիայի դեսպանը ակնարկելով, որ Ադրբեջանը պետք է պատկանի Թուրքիային, մի առիթով հայտարարել էր, որ «Բաքուն այն քաղաքն է, որտեղ խոսում են թուրքերեն»[20]:

1941 թ. օգոստոսին գերմանական հետախուզության ղեկավար, ծովակալ Վ. Կանարիսը ժամանում է Թեհրան և Ստամբուլ՝ տեղում կարգավորելու Թուրքիայում և Իրանում գործող գերմանական հետախուզական խմբերի գործունեությունը: Այդ ժամանակ միայն Թուրքիայում դիվանագիտական ծառայության մեջ էր գերմանական 47 գործակալ[21]:

Ինչպես Թուքիան, այնպես էլ Իրանը ֆաշիստական Գերմանիայի համար հարմար հենակետ էին ԽՍՀՄ-ի դեմ հարավից հնարավոր ագրեսիայի համար: ԽՍՀՄ-ի «հարավային դարպաս» խորհրդային Անդրկովկասը Թուքիայի և Իրանի հետ ուներ շուրջ 1382 կմ սահման, որից խորհրդահիրանական հատվածին բաժին էր ընկնում 780 կմ-ը, իսկ խորհրդաթուրքականին՝ 602 կմ-ը: Չնայած հայտարարված չեզոքությանը՝ Իրանի կառավարող շրջանակները և ինքը շահը շարունակում էին պահպանել իրենց համակրանքը դեպի ֆաշիստական Գերմանիան, որի հետ սերտ տնտեսական և քաղաքական կապեր էին հաստատվել դեռևս պատերազմից շատ առաջ: Իրանում[22], ինչպես Թուրքիայում, գործում էին գերմանական դիվերսիոն-հետախուզական խմբեր, հարյուրավոր լրտեսներ, գործակալներ: Սա հայտարարված «չեզոքության» բացահայտ խախտում էր: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ խորհրդային կառավարու-

---

[17] *Документы МИД Германии, вып. 2. Германская политика в Турции (1941-1943 гг.), М., 1946, с. 34.*

[18] **Корхмазян Р. С.**, *նշվ. աշխ., էջ 95.*

[19] *Документы МИД Германии..., с. 34.*

[20] **Ataov T.** *Turkish Foreign Policy, Ankara, 1965, p. 197.*

[21] **Румянцев Ф. Я.** *Тайная война на Ближнем и Среднем Востоке, М., 1972, с. 86.*

[22] *Իրանա-գերմանական հարաբերությունների մասին տես՝* **Агаев С. Л.** *Германский империализм в Иране, М., 1969.*

թյունը երեք անգամ (1941 թ. հունիսի 26-ին, հուլիսի 19-ին և օգոստոսի 16-ին) նախազգուշացրեց Իրանի կառավարությանը՝ խորհրդահիրանական պայմանագրի խախտման վերաբերյալ: Սակայն Իրանի կառավարությունը չձեռնարկեց և ոչ մի գործնական քայլ: Ուստի ԽՍՀՄ-ը և Անգլիան ստիպված զորքեր մտցրին Իրան[23]: 1941 թ. օգոստոսի 23-ին Անդրկովկասյան ռազմական օկրուգի հիման վրա կազմավորվում է Անդրկովկասյան ռազմաճակատը՝ գեներալ լեյտենանտ Դ. Տ. Կոզլովի հրամանատարությամբ:

Հիմնվելով 1921 թ. փետրվարի 26-ի խորհրդա-իրանական պայմանագրի 6-րդ հոդվածի[24] վրա՝ 1941 թ. օգոստոսի 25-ին Անդրկովկասյան ռազմաճակատի զորքերը (Իրանի հետ սահմանին տեղակայված 44-րդ և 47-րդ բանակները) մտան Իրանի հյուսիսային շրջաններ: Միաժամանակ Մեծ Բրիտանիան, համաձայնեցնելով ԽՍՀՄ-ի հետ, իր զորքերը մտցրեց Իրանի հարավային շրջաններ, իսկ արդեն 1941 թ. սեպտեմբերի 16-ին Իրանի Ռեզա շահը հրաժարվեց գահից՝ հօգուտ իր որդու՝ թագաժառանգ Մուհամեդ Ռեզա Փեհլևիի: Այս ամենի հետևանքով ԽՍՀՄ-ին Իրանից սպառնացող վտանգը թեև վերացավ, սակայն Թուրքիայից սպառնացող վտանգը նոր թափ էր ստանում:

ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Խ. Աքթայը (1941 թ. օգոստոսին) և Մոսկվայում Թուրքիայի ռազմական կցորդը (1941 թ. հոկտեմբերին), հաշվի առնելով գերմանական զորքերի սկզբնական հաջողությունները և հիմնվելով այն ենթադրությունների վրա, թե գերմանացիները կգրավեն Ղրիմը և Կովկասը, խորհուրդ էին տալիս իրենց կառավարությանն առաջ անցնել գերմանական զորքերից և տիրանալ Կովկասին[25]:

1941 թ. աշնանը Թուրքիայի կառավարությունը խորհրդա-գերմանական ռազմաճակատ է ուղարկում զինվորական պատվիրակություն (գլխավոր շտաբի ակադեմիայի պետ, գեներալ Ալի Ֆուադ Էրդեն, գեներալ Հ. Էրքիլեթ): Ավելի ուշ պատվիրակությանն իր զորակայանում ընդունում է անձամբ Հիտլերը: Թուրքիա վերադառնալուց հետո Էրդենին ընդունում է նախագահ Ի. Ինյոնյուն:

---

[23] Խորհրդա-անգլիական համատեղ ռազմագործողությունը կոչվեց «Համաձայնություն»: Ավելի ուշ՝ 1942 թ. վերջին իր զորքերը Իրան մտցրեց նաև ԱՄՆ-ն:

[24] Պայմանագրի 6-րդ հոդվածով նախատեսվում էր, որ Իրանի տարածքից Ռուսաստանի հարավային սահմաններին ռազմական սպառնալիքի առաջացման դեպքում վերջինս իրավունք էր ստանում զորք մտցնել Իրանի տարածք: Արդեն 1942 թ. հունվարի 29-ին Թեհրանում կնքվեց անգլո-խորհրդահիրանական պայմանագիր՝ «Դաշինքի մասին», որը երաշխավորում էր Իրանի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը և քաղաքական անկախությունը: Տե՛ս Дипломатический словарь, т. 1, М., 1984, с. 74: Պայմանագիրն ունեցավ ռազմաստրատեգիական կարևորագույն նշանակություն ԽՍՀՄ-ի համար, որը սկսեց Իրանի տարածքով ստանալ «Լենդ-Լիզի» ծրագրի շրջանակներում դաշնակիցների կողմից մատակարարվող ռազմական մատակարարումները:

[25] **Коркмазян Р. С.** *К вопросу позиции Турции во Второй мировой войне (Լրաբեր հասարակական գիտությունների, 1973, N 8, p. 43).*

Հանդիպման ժամանակ, որին ներկա էին նաև արտգործնախարար Շ. Սարաջօղլուն և Գլխավոր շտաբի պետ, մարշալ Ֆ. Չաքմաքը, Էրդենը, ոգևորված ներկայացնելով իրավիճակը ռազմաճակատում, հայտարարեց, որ գերմանացիների «Ռուսական պատերազմաշրջանը» կարելի է հիմնականում ավարտված համարել[26]:

Էրդենը իր վերադարձից հետո հանդիպեց նաև դեսպան ֆոն Պապենին և նշեց, որ նա շարունակ զգացել ու հիշել է «զինական եղբայրությունը», ինչպես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին[27]:

Իսկ պատվիրակության մյուս անդամ, գեներալ Էրքիլեթը խորհրդա-գերմանական ռազմաճակատ կատարած իր այցին նվիրված (1943 թ., Ստամբուլում) մի գիրք լույս ընծայեց, որտեղ գրում էր, թե «Երբեմնի Մեծ Թուրքական պետությունն իր մեջ ներառում էր Կովկասը, Ղրիմը, Ադրբեջանը, Վոլգա-Ուրալյան շրջանները, Սիբիրը, Թուրքեստանը»[28]:

Արդեն 1942 թ. հունվարին Թուրքիայի նախագահ Ի. Ինյոնյուի հետ հանդիպման ժամանակ ֆոն Պապենը կարևորեց գերմանական զորքերի դեպի Կովկաս շարժվելու ժամանակ խորհրդային սահմանին թուրքական զինված ուժերի կենտրոնացումը[29]:

Միաժամանակ, 1941-1942 թթ. ձմռանը շարունակվում էին գերմանա-թուրքական քննարկումները՝ Ղրիմում, Հյուսիսային Կովկասում և Անդրկով-կասում (Ադրբեջանում) թուրքական անկախ պետական կազմավորումների հնարավոր ստեղծման հարցի շուրջ: Սակայն Գերմանիան իր հերթին սեփական ծրագրերն ուներ Կովկասի հետ կապված. գերմանացիները ծրագրել էին Կովկասը գրավելուց հետո ստեղծել այսպես կոչված «Կովկասի ռայխս-կոմիսարիատ»՝ Թբիլիսի կենտրոնով, որի ռայխսկոմիսար էր նշանակվելու հայատյաց Առնո Շիկեդանցը:

Թուրքիայում 1942 թվականին հայտարարվում է մոբիլիզացիա, իսկ արևելյան վիլայեթներում (նահանգներում) հայտարարվում է ռազմական դրություն: Պատերազմին չմասնակցող Թուրքիան պահում էր վիթխարի բանակ: Մասնավորապես 1939 թ. զենքի տակ էր գտնվում 207 000 մարդ, 1940 թ. սկզբին՝ 700 000, իսկ արդեն 1942 թ.՝ 1 մլն մարդ[30]:

---

[26] *Документы МИД Германии..., с. 45.*

[28] **Кондакчян Р. П.,** *նշվ աշխ., էջ 201.*

[29] *Документы МИД Германии..., с. 58.*

[30] *Մանրամասն տե՛ս* **Кондакчян Р. П.** *Милитаризация Турции в период Второй мировой войны (ВЕУ, общ. науки, 1972, N 1, с. 89-99).*

1942 թ. Անդրկովկասյան ռազմական օկրուգի հրամանատար է նշանակվում բանակի գեներալ Ի. Վ. Տյուլենևը, որն այդ պաշտոնում փոխարինում է գեներալ-լեյտենանտ Դ. Կոզլովին: 1942 թ. մարտի 12-ին Թբիլիսիում Գ. Հարությունյանի, Մ. Ջ. Բաղիրովի, Կ. Չարկվիանիի մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունից հետո Ի. Տյուլենևի հրամանով մարտի 13-ից Անդրկովկասում սկսվեցին մեծ զորավարժություններ, որում Թուրքիան հանդես էր գալիս հնարավոր հակառակորդի դերում:

Արդեն 1942 թ. մայիսի 15-ին երկրորդ[31] անգամ Անդրկովկասյան ռազմական օկրուգը վերածվում է ռազմաճակատի, որի հրամանատար է նշանակվում Ի. Տյուլենևը: 1942 թ. ամռանը կանադացի լրագրող Հենրի Թեյլորը, Թուրքիայից վերադառնալով Տորոնտո, «Սթար» շաբաթաթերթում գրում էր, որ Սևաստոպոլի անկումից (1942 թ. հուլիս) հետո Թուրքիան իր բանակի հիմնական մասը բուլղարական սահմանից տեղափոխել է արևելյան սահման՝ Բաթումի դիմաց[32]:

Սա մի ժամանակահատված էր, երբ ամբողջ պատերազմի ելքը վճռվում էր խորհրդա-գերմանական ռազմաճակատում: Գերմանական հրամանատարության մշակած «Բրաունշվեյգ» (մինչև 1942 թ. հունիսի 30-ը անվանվում էր «Բլաու») ռազմագործողությամբ նախատեսվում էր ջախջախել խորհրդային զորքերը Դոնի ձախ ափին, գրավել Կովկասի նավթային շրջանները և հաղթահարելով Կովկասյան լեռնաշղթան՝ դուրս գալ դեպի Մերձավոր և Միջին Արևելք: Ծրագրելով 1942 թ. ամառային հարձակումը՝ Հիտլերը մտադրվել էր ամենից առաջ գրավել Ստալինգրադն ու Կովկասը[33]: Անգլիացի նշանավոր ռազմական պատմաբան Լիդլ Հարտը իր նշանավոր աշխատության մեջ գրում է, որ «Հիտլերն առաջին հերթին ցանկանում էր հնարավորինս շուտ գրավել Կովկասը և առաջարկեց այդ ուղղության գործողությունների հրամանատարությանը Կովկասը համարել իրենց առաջնային խնդիրը»[34]:

Վերմախտի գերագույն հրամանատարության 1942 թ. հուլիսի 23-ի թիվ 45 դիրեկտիվով («Բրաունշվեյգ» ռազմագործողության շարունակության մասին)[35] հաստատվեց Կովկասը գրավելու «Էդելվայս» գործողությունը, որի գլխավոր խնդիրն էր խորհրդային Սևծովյան նավատորմի ոչնչացումը, Կովկասի նավթային շրջանների բռնակցումն ու Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելը:

---

[31] *Առաջին անգամ այն ստեղծվել էր 1941 թ. օգոստոսի 23-ին՝ Խորհրդային զորքերի Իրան ներխուժելու նախօրեին:*

[32] **Васильев И.** *О турецком «нейтралитете» во Второй мировой войне, М., 1951, с. 53.*

[33] *Роковые решения, пер. с англ., М., 1958, с. 153.*

[34] **Лиддел Г.** *Стратегия непрямых действий, М., 1957, с. 348.*

[35] *Դիրեկտիվի տեքստը տե՛ս Совершенно секретно! Только для командования, М., 1967, с. 387-390.*

Գերմանաֆաշիստական հրամանատարությունը[36] նախատեսում էր գրավելով Հյուսիսային Կովկասը, շրջանցելով Կովկասյան լեռնաշղթան արևմուտքից (գրավելով Նովոռոսիյսկն ու Տուապսեն) և արևելքից (գրավելով Գրոզնու ու Բաքվի նավթային շրջանները), միաժամանակ հաղթահարելով լեռնաշղթան կենտրոնական մասում (լեռնանցքներով)՝ դուրս գալ Անդրկովկաս: Ֆաշիստական Գերմանիան, ձգտելով ներխուժել Անդրկովկաս, ցանկանում էր արագացնել պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը՝ընդդեմ ԽՍՀՄ-ի: Գերմանիան ուներ նաև հեռակա նպատակներ: Ծրագրվում էր ֆանտաստիկ ռազմագործողություն. հյուսիսային Աֆրիկայում ֆելդմարշալ Է. Ռոմելի հրամանատարությամբ գործող «Աֆրիկյան կորպուսը» պետք է ճեղքեր Սուեզի ջրանցքը և դուրս գալով Մերձավոր Արևելք՝ միանար Կովկասյան ռազմաճակատում կռվող զորքերին՝դեպի Հնդկաստան շարժվելու համար:

Ուստի 1942 թ., երբ գերմանական զորքերը մոտեցան Հյուսիսային Կովկասին, գերմանական հրամանատարությունը սկսեց քայլեր ձեռնարկել հատուկ էքսպեդիցիոն կորպուս ստեղծելու ուղղությամբ՝ դեպի Իրան և Մերձավոր Արևելքի երկրներ շարժվելու համար: Այդ նպատակով դեռ 1941 թ. մայիսին ստեղծված «հատուկ Ֆ շտաբի» (ղեկավար գեներալ Հ. Ֆելմի անունով) հիման վրա 1942 թ. օգոստոսի 20-ին որոշում կայացվեց ստեղծել առանձին էքսպեդիցիոն «Ֆ» կորպուսը[37]:

Հետագայում՝ 1943 թ. ապրիլի 16-ին, Հունգարիայի բռնապետ, ծովակալ Մ. Հորթիի հետ հանդիպման ժամանակ Հիտլերը հաստատում էր, որ «նախատեսվում էր Կովկասից շարժվել դեպի Միջագետք և միաժամանակ կտրել Վոլգան»[38]:

Իր հուշերում գեներալ Տյուլենևը գրում է, որ գերմանաֆաշիստական հրամանատարությունը հույս ուներ Կովկասով անմիջական կապ հաստատել թուրքական բանակի հետ, որը շարունակում էր ԽՍՀՄ-ի դեմ պատրաստվել պատերազմի[39]: Իսկ խորհրդային մարշալ Ա. Գրեչկոն իր հուշերում գրում է, որ գերմանական գլխավոր հրամանատարությունը հույս ուներ, որ Անդրկովկաս դուրս գալուն պես Թուրքիան հարավից հարված է հասցնելու խորհրդային Կովկասին[40]:

---

[36] Գերմանական հրամանատարությունը Կովկասի նվաճման համար առանձնացրել էր շուրջ 450 000 զինվոր ունեցող «Ա» բանակախումբը (հրամանատար Վ. Լիստ, այնուհետև՝ գեներալ-գնդապետ Է. ֆոն Կլեյստ):

[37] **Ибрагимбейли Х. М.** *Крах «Эдельвейса» и Ближний Восток, М., 1977, с. 149.*

[38] *История Второй мировой войны, т. 7, М., 1976, с. 340.*

[39] **Тюленев И. В.** *Крах операции «Эдельвейс», Орджоникидзе, 1988, с. 35.*

[40] **Гречко А. А.** *Битва за Кавказ, М., 1973, с. 53.*

ԽՍՀՄ-ի հանդեպ ունեցած իր վերաբերմունքը նորընտիր վարչապետ Շ. Սարաջօղլուն արտահայտեց նույն օգոստոսին ֆոն Պապենի հետ հանդիպման ժամանակ՝ հայտարարելով, որ ինքը «որպես թուրք, բուռն կերպով ցանկանում է Ռուսաստանի ոչնչա-ցումը»[41]: Իսկ նորանշանակ արտգործնախարար Ն. Մենեմենջիօղլուն նույն ֆոն Պապենին ասել էր, թե «Թուրքիան, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա ամենավճռական կերպով շահագրգռված է բոլշևիկյան Ռուսաստանի ամբողջական պարտությամբ»[42]: Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը, չթաքցնելով վերաբերմունքը նաև Խորհրդային Հայաստանի նկատմամբ, ցանկանում էր ներխուժելով Կովկաս՝ պանթուրքիստական մտայնությամբ վերջնականապես լուծել «Հայկական հարցը», այսինքն՝ «գերեզմա-նել» հայ ժողովրդին[43]:

Թուրքիայի, մասնավորապես Անդրկովկաս հնարավոր ներխուժման հարցը քննարկվեց 1942 թ. օգոստոսի 12-ին Մոսկվայում սկսված խորհրդաանգլիական բարձր մակարդակով բանակցությունների ժամանակ: Քննարկման ժամանակ՝ օգոստոսի 15-ին, Ստալինն ասաց Չերչիլին. «Մենք կկանգնեցնենք նրանց (թուրքերին), նրանք չեն անցնի լեռներով... լուրեր են տարածվում, թե թուրքերը կհարձակվեն մեզ վրա Թուրքեստանից, եթե դա ճիշտ է, ուրեմն ես կկարողանամ կանգնեցնել նրանց»[44]:

Շուտով՝ 1942 թ. օգոստոսի 24-ին, Անդրկովկասում մտցվում է պատերազմական դրություն: Գեներալ Ս. Մ. Շտեմենկոն գրում է իր հուշերում. «1942 թ. կեսերին ոչ ոք չէր կարող վստահ լինել որ նա (Թուրքիան) հանդես չի գա Գերմանիայի կողմից: Իզուր չէին Խորհրդային Միության հետ սահմանին այն ժամանակ կենտրոնացվել թուրքական 26 դիվիզիաներ»[45]:

Խորհրդային բանակը, որը ծանր մարտեր էր մղում Ստալինգրադում և Հյուսիսային Կովկասում, թուրքական սպառնալիքի[46] տակ ռազմաճակատից կտրել և Անդրկովկասում էր պահում վիթխարի ուժեր: Մասնավորապես Թուրքիայի հետ սահմանին խորհրդային հրամանատարությունը տեղակայել էր 45-րդ և 46-րդ բանակները:

Թուրքական ԶՈՒ գլխավոր շտաբի պետ, մարշալ Ֆ. Չաքմաքը 1942 թվականին Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը համարում էր անխուսափելի: Ընդ որում, թուրքական հնարավոր հարձակումը ենթադրվում էր իրականացնել

---

[41] *Документы МИД Германии ..., с. 98.*

[42] *Նույն տեղում, էջ 92:*

[43] **Սիմոնյան Հ. Ռ.,** *Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, էջ 503:*

[44] **Churchill W. S.** *The Second World War, vol. 4, New York, 1962, p. 432.*

[45] **Штеменко С. М.** *Генеральный штаб в годы войны, М., 1968, с. 54.*

[46] *Խորհրդային Կովկասի սահմանին կենտրոնացվել էր թուրքական 3-րդ բանակը՝ շուրջ 300 000 մարդ:*

Իրանական բարձրավանդակի տարածքով դեպի Բաքու: Թուրքական հրամանատարությունը կարծում էր, որ անգլիացիները Իրանում բավարար դիմադրություն ցույց չեն տա, մինչդեռ հաշվի էր առնվում լուրջ հակահարվածը ռուսական կողմից:

Թուրքիայի և Կովկասի շուրջ ընթացող զարգացումներին ուշադրությամբ հետևում էին նաև օվկիանոսից այն կողմ՝ ԱՄՆ-ում: Մասնավորապես ԱՄՆ նախագահ Ֆ. Ռուզվելտը Ստալինին ուղար-կած իր ուղերձում (1942 թ. դեկտեմբերի 16) պատրաստակամություն է հայտնում ամերիկյան օդային զորամիավորումներ ուղարկել Անդրկովկաս: Սակայն 1942 թ. դեկտեմբերի 18-ին Ֆ. Ռուզվելտին ուղղված պատասխան նամակում Ստալինը կտրականապես մերժում է անգլո-ամերիկյան էսկադրիլիաների՝ Անդրկովկաս ուղարկելու անհրաժեշտությունը[47]: Պատճառն այն էր, որ Ի. Ստալինը ձգտում էր բացառել անգլո-ամերիկյան զինուժի ներկա-յությունը նշված տարածաշրջանում:

Կովկասի հարցում անգլո-ամերիկյան կողմի անհանգստությունը պայմա-նավորված էր այն հանգամանքով, որ Կովկասի համար մղվող ճակատա-մարտում խորհրդային կողմը կպարտվի: Մասնավորապես արևմտյան շատ փորձագետներ այդ ժամանակ համոզված էին, որ Կովկասի օկուպացման հարցը մոտակա շաբաթների հարց է:

Այստեղ հարկ է նշել, որ Կովկասի ճակատամարտի արդյունքը շատ բանով կապված էր մեկ այլ՝ Ստալինգրադի ճակատամարտից: Մասնավորապես վերմախտի ցամաքային զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Ֆ. Գալդերը իր օրագրում 1942 թ. գրում էր, որ ֆյուրերին ուղղված զեկույցում վերմախտի օպերատիվ վարչության պետ, գեներալ Ա. Իոդլը հաստատապես նշել էր, որ «Կովկասի ճակատագիրը վճռվում է Ստալինգրադի տակ»[48]:

Ստալինգրադի տակ խորհրդային զորքերի պարտությանն էին սպասում նաև խորհրդա-թուրքական սահմանին կենտրոնացված թուրքական դիվիզիաները: Ինչպես հայտնի դարձավ ավելի ուշ «Պրավդա» թերթում 1947 թ. մարտի 27-ին հրապարակված հոդվածից, Թուրքիայի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա նշանակված էր 1942 թ. հոկտեմբերին, այն բանից հետո, երբ Բեռլինը կհայտարարեր Ստալինգրադի անկման մասին[49]: Սակայն Գերմանիային և Թուր-քիային վիճակված չէր իրականացնելու իրենց ծրագրերը:

Թեև գերմանացի զինվորները 1942 թ. օգոստոսի 21-ին, հաղթահարելով Էլբրուսի գագաթը, այդտեղ տեղադրեցին ֆաշիստական դրոշը, սակայն ալպինիստական այդ հաջողության հետ միասին Կովկասյան լեռնաշղթան

---

[47] Переписка председателя Совета министров СССР с президентом США и премьер-министрами Великобритании во время Великой Отечественной войны 1941-1945, т. 2, М., 1957, с. 41-42.

[48] **Гальдер Ф.** Военный дневник, т. 3, кн. 2, М., 1971, с. 310.

[49] Правда, 27.III.1947.

հաղթահարել այդպես էլ չկարողացան: Իսկ արդեն 1942 թ. նոյեմբերին խորհրդային զորքերը, Ստալինգրադի տակ անցնելով հակահարձակման, շրջապատման մեջ վերցրին գերմանական 6-րդ բանակը (հրամանատար, ֆելդմարշալ Պաուլյուս): Իսկ երբ ֆելդմարշալ ֆոն Մանշտեյնը խնդրեց ֆյուրերին իրեն տրամադրել Կովկասում գտնվող զորքերը՝ փրկելու համար պաշարված 6-րդ բանակը, Հիտլերը պատասխանեց. «Եթե մենք չստանանք Բաքվի նավթը, ապա պատերազմը տանուլ է տրված»[50]:

1943 թ. փետրվարին 6-րդ բանակն անձնատուր եղավ: Միաժամանակ 1943 թ. հունվարին խորհրդային զորքերը հակահարձակման անցան Հյուսիսկովկասյան ռազմաճակատում: Այսպիսով, Երկրորդ համաշխարհային պատերազմի ամենավճռական՝ Ստալինգրադի, ինչպես նաև Կովկասի ճակատամարտերում[51] խորհրդային բանակի տարած հաղթանակներն ունեցան ռազմաստրատեգիական և ռազմաքաղաքական կարևորագույն նշանակություն: Գերմանաֆաշիստական զորքերի պարտությունը Ստալինգրադում և Կովկասում ոչ միայն պատերազմում արմատական բեկման սկիզբը դրեց, այլև կանխեց թուրքական դիվիզիաների հնարավոր ներխուժումը Անդրկովկաս՝ դրանով իսկ թաղելով «Մեծ Թուրքիա» ստեղծելու՝ թուրքական ռազմաքաղաքական ղեկավարության պանթուրանական ծրագրերը:

КАВКАЗ В СФЕРЕ ГЕОСТРАТЕГИЧЕСКИХ ИНТЕРЕСОВ ГЕРМАНИИ

НАЗАРЯН А. В.

Резюме

Кавказский регион в силу своих нефтяных запасов в годы Первой и Второй мировых войн представлял огромный интерес для сверхдержав мира, особенно для Германии, у которой не было нефтяных ресурсов. Поэтому захват Кавказа и, в частности, овладение бакинской нефтью стало важнейшей целью военно-стратегических планов Германии.

---

[50] **Ергин Д.,** *նշվ. աշխ., էջ 356.*

[51] *Ստալինգրադի ճակատամարտը խորհրդային բանակի համար ունեցավ երկու փուլ՝ պաշտպանական (1942 թ. հուլիսի 17-նոյեմբերի 18) և հարձակողական (1942 թ. նոյեմբերի 19-1943 թ. փետրվարի 2): Կովկասի համար ճակատամարտը նույնպես ընթացավ երկու փուլով՝ պաշտպանական (1942 թ. հուլիս-1943 թ. հունվար) և հարձակողական (1943 թ. հունվար-1943 թ. հոկտեմբեր): Ստալինգրադի ճակատամարտին մասնակցում էին 30 000 հայ ռազմիկներ, իսկ «Կովկասի համար» ճակատամարտին՝ 100 000 հայ ռազմիկներ: Տե՛ս* **Арутюнян К. А.** *Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза 1941- 1945 гг., Е., 2004, с. 107, 248.*

Нацистская Германия лелеяла надежду, что ее де факто союзница Турция вступит в войну для решения этого вопроса. Одновременно военно-политическое руководство Турции намеревалось вторгнуться в Закавказье с целью окончательного решения “Армянского вопроса” и создания пантюркистского государства. Однако победоносные битвы Советской армии под Сталинградом и на Кавказе сорвали немецко-турецкие планы по захвату Кавказа.

THE CAUCASUS IN THE FIELD OF GEOSTRATEGIC INTERESTS OF GERMANY

H. NAZARYAN

Abstract

The Caucasian region due to its enormous oil supplies had a great geostrategic importance during The First World War as well as during The Second World War for the powerful countries of the world, mainly for Germany which lacked oil resources. So the capture of the Caucasus, mainly the oil resources of Baku, became the foremost aim of military-strategies for Germany.

To solve this problem, Nazi Germany expected Turkey to enter into an alliance. Military-political authorites of Turkey intended to invade Transcaucasia and finally solve ‘’The Armenian question’’ and create ‘’Panturanic state’’. But the victorious battles of the Soviet army in Stalingrad and the Caucasus prevented the military actions of Turkish army in Transcaucasia. Thus the plans of Germany and Turkey for seizing the Caucasus, failed. Not only the scientific literature, but also the collections of published archival documents, memoirs of the famous statesmen and military figures of that time were used.